

Այ սխրալի հայր պատուական, որ Սերովբէից ես համեմատ,
 ես թարմատարս և ապարճնս հիմ երգեցից տեառնդ իմ դրուատ:
 Բամեալ ազանց Հայկազնից՝ խնամածու ըստ հօր գթո,
 հանդիսադիր դու և մարգիչ, հաստակառոյց վեմ հաւատո:
 Վարուքդ սուրբ, գործով մաքուր՝ ըստ Եղիայի և Յովհաննու,
 տեսականաւ պայծառացեալ՝ ասպետափառ ակնդ արևու:
 Ապենիազ վեհիդ անծին՝ ո՞ր դրուատե բան քեզ յարմար,
 սակայն ոգէ պաճարեղէնս հռետորիդ իբր զտխմար:
 Դոտից քննող մասանց բանի՝ յաբունապետ ես կատարած
 այնքան դու՝ հայրդ իմ սրբասնած, որ քեզ չհասին չարին արկած:
 Դաստիարակ մտաց մարդկան, վարժեալ յիմաստս գերակա,
 Արիստոտելդ և Պղատոնդ, համեմատեալ Հիպոկրատա:
 Աթենականն հանճարով՝ հասեալ նոցին կէտ և կաճառ,
 ևս գերազանց գոլ քան զբնաւս՝ կրթեալ ի յիրս բան և պատճառ:
 Պետ պատուական Պահլաւունեա՝ պարետ կարգեալ արամենիա,
 իբր զՄովսէս և զԱհարոն՝ տուեալ ազգիս Իսրայէլա:
 Երանելոյ հորդ մերոյ ցանկան մանկունք եկեղեցւոյ/
 և փափագին սրբութեան քո՝ իբր եղջերու յաղբերս ջրոյ:
 Տիասս մտօք զսա տուայտ, տարակցեալս երեխայրէ:
 Ոչ որպէս պարտն է վճարե, այլ զսէր սրտին ըղձակերտէ:
 Իսկ դու, սուրբ հայրդ իմ ըստ հոգւոյս, և ուսուցիչ իմ ըստ մարմնոյս,
 Խանդաղատեա՝ քոյս, հիքոյս՝ միշտ յիշելով ի սուրբ յաղօթ:

Այսպիսով պարզվում է, որ 17-րդ դարի մշակութային և հոգևոր առավել խոշոր գործիչներից մեկի՝ Խաչատուր Կեսարացու անունը տեղ չի գտնում միջնադարյան հայկական պոեզիայի՝ գոյություն ունեցող ժողովածուում: Սակայն նրա ժամանակակիցների և աշակերտների անդրադարձներում խոսվում է գեղարվեստի բնագավառում նրա բացառիկ ստեղծագործական օժտվածության մասին, որը պետք է արտացոլվեր նաև պոեզիայում: Եվ իսկապես, Նոր Զուղայի հայ գաղթօջախի պատմության մասին Հ. Տեր-Հովնանյանցի երկհատոր կոթողային աշխատության մեջ իր բանաստեղծական գովաբանության տեքստն է բերում ծայրագույն վարդապետ Գրիգորի աշակերտ Խաչատուր Կեսարացին: Տեքստի վերլուծությունը ցույց է տալիս, որ բանաստեղծությունը գաղտնագրող հեղինակի անունը գտնվում է բանաստեղծի վերին բառերի հորիզոնականում: Հեղինակը վարպետորեն օգտագործում է անվանական ժանրը (աքրոստիկոս): Բնագիրը մենք վերարտադրել ենք որոշ բնագիտական ճշգրտումներով:

ԲԱՅՐՈՆԸ ԵՎ ՄԻՒԹԱՐՅԱՆՆԵՐԸ ՉԱՐԼՁ ԴԱՌՄԵԹԻ ԳԼԱՀԱՏՄԱՐԻ

ՌՈՒՉԱՆ ԱՈՒԲԵԼՅԱՆ

Հայագիտության պատմությունն Անգլիայում ունի դարավոր պատմություն: Տակավին 1736թ. Ուիսթոն եղբայրները թարգմանել են Մովսես Խորենացու «Հայոց Պատմությունը» գրաբարից լատիներեն և երկու լեզվով միաժամանակ հրատարակել Լոնդոնում: 1901թ. Բրիտանական Ակադեմիայի հիմնադրումից ի վեր, դերկոմս Տեյմս Բրայսը ըստ արժանվույն է ներկայացրել հայերենի ուսումնասիրությունն ակադեմիայում, իսկ Ֆրեդերիկ Քոնիքերը շարունակել է նույն գործը: 1965 թ. Անգլիայի Օքսֆորդի համալսարանում հիմնվեց հայագիտական ամբիոն, որտեղ երկար տարիներ մեծ նվիրյալ Չարլզ Դաուսեթը ծավալեց դասական հայերենի ուսումնասիրությունը և ուսուցումը: Նրա գրչին են պատկանում «The Madman Has Come Back Again», «Byron and Armenian» («Խենթը նորեն եկավ», «Բայրոնը և հայերենը») աշխատությունը՝ ծոնված լորդ Բայրոնի ծննդյան 200-ամյակի հիշատակին: Բայրոնը և հայերը թեմայով գրվել են բազմաթիվ ուսումնասիրություններ, սակայն Չարլզ Դաուսեթի ուսումնասիրությունն աչքի է ընկնում իր նորարարությամբ, հարցադրումների ինքնատիպությամբ, դիտարկումների հետաքրքրությամբ: Ներկա հետազոտությունը անգլիացի հայագետի մեկնաբանման առաջին ներկայացումն է մեզանում:

1816 թ. լորդ Բայրոնը այցելում է Վենետիկի Սուբբ Դազար կղզին՝ Մխիթարյանների միաբանության վանքը: Գրադարանի հարուստ ձեռագիր մատյանները, թագուհի Սլքեի պատվերով 862թ. ծաղկած Ավետարանը և այլ մասունքներ հմայում են Բայրոնին, և խնդրում է վանահայրերին իրեն հայերեն սովորեցնել: 1816 թ. դեկտեմբերի 5-ին նա գրում է Ջոն Մարրեյին. «Ես զգում եմ՝ միտքս ուզում է բախվել ապառաժ ժայռի: Այդ ապառաժը հայերենն է. որպես ամենախրթին բան, որպեսզի չարչարի ինձ, դարձնի համակ ուշադրություն»³:

Անձնական անհաջողություններից հարկադրված նա՝ կամավոր տարագրվել էր Անգլիայից և որպես մխիթարանք, հաստատուն հեմակետ էր որոնում հայերենի մեջ: Հարություն Ավգերյանը և Սուքիաս Սոմալյանը՝ Բայրոնի ուսուցիչները, նրան ուղիղ տարան դեպ այն ապառաժը, որին կամենում էր բախվել Բայրոնի միտքը: Հայերեն սովորելու ցանկությունն, անշուշտ, նաև այլ լուրջ պատճառ ուներ: Նա կամենում էր կարդալ հայ միջնադարյան քնարերգության և մատենագրության բնագրերը և ապա ծանոթանալ օտար լեզուներից հայերեն թարգմանված արժեքավոր գրվածքներին, որոնց նախօրինակները կորել էին առհավետ և հայերեն թարգմանություններն ունեին բնագրի արժեք: Ահա թե ինչ է գրում Թոմաս Մուրին, 1816 թ. դեկտեմբերի 5-ին. «Վանքում կան շատ զարմանահրաշ ձեռագիր մատյաններ, գրքեր և թարգմանություններ հուններենից, որոնք հիմա կորած են, նաև պարսկերենից, ասորերենից և այլ լեզուներից, ներառյալ ազգային մշակույթը»⁴:

Թե որքան է հաջողվել Բայրոնին տիրապետել հայերենին, ակնհայտորեն երևում է «Անգլիայի բանաստեղծների ընտրանի» հրատարակության «Լորդ Բայրոնի հայերեն վարժանքներն ու պոեզիան» ենթախորագրի մեջ: Ընդգրկված են թարգմանած հատվածներ Մովսես Խորենացու «Հայոց պատմություն»-ից, նաև հայերեն հնչյունների անգլերեն տառադարձմամբ երկու էջանոց բնօրինակը, որը ներկայումս պահպանվում է Լոնդոնի Ջոն Մարրեյ ՄՊԸ գրադարանում: Այնտեղ է գտնվում նաև հայերեն ձեռագիր տառերի պատմությունը, որը գրառել է Բայրոնը: Վկայակոչված են V դարի ձեռագիր մատյաններ: Ահա մի գողտրիկ հատված Բայրոնի նկարագրությամբ. «Վռամշապուհի թագավորության օրոք՝ 5-րդ դարում, մի գիտուն հայ այր՝ Մեսրոպ Մաշտոցը, ստեղծեց այբուբենը՝ կազմված 36 տառից: Մինչ այդ հայերն օգտվում էին սիրիական, պարսկական կամ հունական տառերից: 12-րդ դարում ավելացան ևս երկու տառ՝ Օ, Ֆ: Տառերի գյուտից ի վեր, հայերը դադարեցին օգտագործել օտար տառեր: Ապա այլադավանների, նաև քրիստոնյաների կողմից միտումնավոր ոչնչացվեցին բազում ձեռագիր մատյաններ՝ կամենալով ջնջել հեթանոս շրջանին վերաբերող բոլոր վկայությունները: Հայերը մինչ այդ ունեցել են հարուստ, մշակված գրականություն...»⁵: Սուրբ Դազար կղզում Բայրոնն անգլերեն է թարգմանել Ավգերյանի «Քերականություն հայերեն և անգլերեն» ձեռնարկը՝ ստանձնելով հրատարակման ծախսը: Ավգերյանը խտալերեն լեզվով կազմել է մեկ այլ «Քերականություն հայերենի համար» Բայրոնի թարգմանությամբ և համահեղինակությամբ: (Առաջին հրատարակությունը 1833 թ.): 1817թ. մարտի 2-ին Բայրոնը գրում է Ջոն Մարրեյին. «Մենք ուզում ենք իմանալ տարակությունը 1833 թ.): 1817թ. մարտի 2-ին Բայրոնը գրում է Ջոն Մարրեյին. «Մենք ուզում ենք իմանալ Անգլիայում, Օքսֆորդում, Քեմբրիջում կամ այլ տեղ հայերեն տպագրություններ կա՞ն: Ուիսթոնները Անգլիայում հրատարակել են «Հայոց պատմության» գրաբար բնագիրը, իրենց իսկ լատիներեն թարգմանությամբ: Արդյոք պահպանվե՞լ են օրինակներ և որտե՞ղ: Թախանձագին խնդրում եմ տեղեկացիր քո ծանոթ գիտականից»⁶: Բայրոնը «Քերականություն» գրքի համար Մխիթարյան հայրերի խնդրանքով գրել է առաջաբան: Ահա մի հատված.

«Այս մարդիկ քրիստոնյա, ազնիվ և ճնշված ազգ են: Տարեգրության մեջ, թերևս, հազիվ թե գտնվի մի ազգ, որ ավելի անթիժ լինի ոճիրներից, քան հայ ազգը, որի առաքինությունն է եղել խաղաղությունը, իսկ մեղքը՝ բռնադատվածությունը: Բայց ինչպիսին էլ եղած լինի նրանց ճակատագիրը, իսկ դա դառն է եղել, և ինչպիսին էլ լինի հետագայում, նրանց երկիրը առհավետ պետք է լինի ամենահետաքրքիրներից մեկը

մոլորակի վրա, թերևս միայն նրանց լեզուն պահանջում է ավելի խոր ուսումնասիրություն՝ ավելի հրապուրիչ դառնալու համար: Եթե Աստվածաշունչը ճիշտ ընկալվի, ապա Հայաստանում էր գտնվում Դրախտը՝ Հայաստանում էր, որտեղ առաջին հերթին նվազեց ջրհեղեղը, և աղավնին վայր իջավ: Բայց հենց որ անհետացավ Դրախտը, երկիրն ընկավ դժբախտության մեջ, քանզի, թեև երկար ժամանակ հզոր էր նրա քաղաքությունը, բայց հետագայում գրեթե անկախ չի եղել: Պարսիկ բռնակալներն ու թուրք փաշաները հավասարապես ամայացրել են այն վայրը, որտեղ Աստված ստեղծեց Ադամին իր իսկ պատկերով»⁷:

Այս խոհերի մի մասը կարող են քաղված լինել Ավգերյանի հետ ունեցած Բայրոնի դասերից: Բայրոնը անշուշտ, պետք է որ ուշադիր լսած լիներ այն ամենը, ինչ պատմում էին Սուրբ Ղազարի վանահայրերը նա հիացմունքով էր լցված նրանց հանդեպ:

Բայրոնը Աստվածաշնչի հայերեն թարգմանության մեջ կարդաց մի նամակ կորնթացիներից առ Սուրբ Պողոսը և Պողոս Առաքյալի պատասխանը՝ ընդհանրական երրորդ թուղթը ուղղված կորնթացիներին՝ Անգլերեն թարգմանության մեջ չկար այդ նամակը: Նա անմիջապես թարգմանեց ուղերձներն աստվածաշնչական արձակ անգլերենի: Թոմաս Սուրը իր «Բանաստեղծի կենսագրությունը» գրքում կարծիք հայտնում, որ Բայրոնի կատարած իսկական նամակների մեկնությունը, որ նա ներկայացնում է ամբողջովին, թարգմանվել է անգլերեն առաջին անգամ:

Լորդ Բայրոնի «Հայերեն վարժանքներն ու պոեզիան» ժողովածուի մեջ ընդգրկված է նաև թարգմանություն Ներսես Լաբրոնացու «Սինոդական ճարտասանությունից մի գողտրիկ ներբող՝ ձոնված Բրիստոսին»:

Մինչև վերջերս վկայություն չկար, թե Բայրոնը իրեն ժամանակակից հայ պոեզիայից որևէ գործ թարգմանել: Այնուամենայնիվ, 1976 թ. պրոֆեսոր Մըք Գաննը Լոնդոնում Ջոն Մարրեյ ՄՊԸ գրադարանում Բայրոնի արխիվն ուսումնասիրելիս նրա «Չափածո ստեղծագործությունների լիակատար ժողովածուն» Օքսֆորդի համալսարանի մամուլում հրատարակելու համար, հանդիպեց ձեռագիր փաստաթղթի՝ վերնագրված՝

«Թարգմանություններ հայերենից»

«Ամարանոց Բիւզանդեան»,

“The Byzantine Summer-House in the Straits of Constantinople”

«Ամարանոց Բիւզանդեանի նեղուցին Կոնստանդնուպոլսոյ»⁸:

Ղ. Ինճիճյանի պոեմից Բայրոնը թարգմանել է նախերգանքը և տասնյոթ տուն առաջին երգից՝ 6-ի մինչև 22, որը նա վերաթվարկել է 1-ից մինչև 17: Ահա մի քանի բնօրինակներ Բայրոնի թարգմանությանը՝

ԱՄԱՐԱՆՈՑ ԲԻՒԶԱՆԴԵԱՆ

Ձայն ցօղ լուսաբուլխ՝ ցօղեայիս երկին,
դու երկինք շնչեա՝ զայն շունչ, զայն հոգին,
որ յարարածոց՝ հանէ արարչին,
և յեղականաց.ի փառս անեղին:¹⁰

That dazzling (sp.del) dew of Heaven, rain upon me! Breathe that (the correctum)
Spirit upon me – which from the creation conducts to the Creator and
From the things – made gives Glory to the Maker.¹¹

Բոլորակ եմ կիսագունտ որպէս խորան,
Բնութեամբ կայուն, անձամբ շարժուն անտեսական
I am a hemisphere round as a pavilion, by nature
Firm, in reality moveable invisibly

Բայրոնի «Մանֆրեդ» պոեմի վրա խոր ազդեցություն է թողել Ղ.Ինճիճյանի պոեմը: Բայրոնը տպավորված էր հայերեն չափածոյի անսպառ հնարավորությունից¹²:

Which casts up misty columns that become
Clouds raining from the re-ascended skies¹³
Մշուշի սյուները ելնում են, ամպում
և անձրևում ցած՝ երկնքից հառնած: (Ռ.Ա.) (էջ28):

Այնպես է թվում, ասես, հիրավի այս պատկերը հայերենից է փոխառնված: Անդրե Մորիսը նշել է, Մանֆրեդի և սուրբ աբբա Մորիսի երկխոսության վրա, հնարավոր է, Բայրոնի և հայ Հայրերի զրույցներն են ներգործել: Աբբահոր կերպարում Որբերյանը¹⁴ տեսնում է Ավգերյանին՝ կամ Սոմայանին: Այդ երկուսն ավելի հավանականը Ավգերյանն է, որին Բայրոնը 1816թ.դեկտեմբերի 27-ին Մարրեյին գրած նամակում ներկայացնում է որպես իր «հոգևոր ուսուցիչ, հովիվ, հմուտ վարպետ, ուսյալ և բարեպաշտ հոգի», թեև բացառվում նաև «Վանահայրերից գերագույնը... ձյունափառ մորուքով սքանչելի մի ծերունի, եպիսկոպոս Մույն ինքը՝ վանահայր Ստեփանոս Ագոնցը: Անկասկած «Մանֆրեդի» մեծ մասը Բայրոնը գրել է հաճախակի սուրբ Ղազար այցելելիս, այն ձիթենու տակ, որտեղ սիրում էր ստեղծագործել և խորհրդածել բանաստեղծը: Մինչև հիմա էլ վանականները կոչում են այն «Բայրոնի բլուր»:

տեղծը: Մինչև հիմա էլ վանականները կոչում են այն «Բայրոնի բլուր»:

Դառուսթը Բայրոնի կատարած թարգմանությունը հանգամանորեն համեմատել է բնագրի հետ: Պոեմը հարուստ է բառապաշարով, բարդ է ոճը, քերականությունը: Բայրոնը, հաղթահարելով բոլոր դժվարությունները, թարգմանել է ճիշտ և հղկված:

Անգնահատելի է Չարլզ Դառուսթի ծառայությունը: Նա հայ գրականության հետազոտման նվիրյալ մշակն է և աշխարհին է մատուցել «փոքր ածու» հայ ազգի մնայուն արժեքները: Լորդ Բայրոնի՝ հայերենի հանդեպ ունեցած բուռն հետաքրքրությամբ, մեկ անգամ ևս նա ընդգծեց հայ գրականության և արվեստի տակավին վաղնջական ժամանակներից ծլարձակած խոր արմատները: «Խենթը նորեն եզավ» աշխատությունը փաստագրական իրողություն է Բայրոնի՝ մինչ այդ անհայտ աշխատանքների մասին: Դառուսթը կարևորում է նաև Բայրոնի ծառայությունը անգլիական թարգմանչաց արվեստին: Աստվածաշնչի անգլերեն թարգմանության մեջ չկար կորնթացիների նամակն առ Պողոս Առաքյալը և վերջինիս երրորդ թուղթը՝ ուղղված կորնթացիներին: Բայրոնը, կարդալով Վենետիկում 1805 թ. հայերեն հրապարակված Ավետարանը (էջ 25-27), անմիջապես թարգմանեց ուղերձները: Փաստորեն նա առաջինն էր, որ կատարեց թարգմանություն հայերենից անգլերեն: Բայրոնը համալրեց Ջոն Ուիլքինսի 1380-84թթ. Աստվածաշնչի անգլերեն լրիվ թարգմանությունը, նաև Ուիլյամ Թինդլեի հունարենից և մասամբ եբրայերենից անգլերեն թարգմանած Նոր կտակարանը (1539 թ.): Չուր չէր Բայրոնի հոգին ձգտում դեպ մի ազգ, «որ անբիժ է ոճիրներից և որի երկիրը առհավետ պետք է լինի ամենահետաքրքիրներից մեկը մոլորակի վրա», ինչպես նշում է Բայրոնը իր գրած առաջաբանում:

Շնորհիվ Չարլզ Դառուսթի հետևողական որոնումների՝ Լորդ Բայրոնի հայագիտական ուսումնասիրությունները հասու դարձան միջազգային հայագիտությանը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 1 Charles Dowsett, "The Madman Has Come Back Again", "Byron and Armenian", 1980, US, Society for Armenian Studies
- 2 Չարլզ Դառուսթ, «Խենթը նորեն եզավ», «Բայրոնը և հայերենը», Երևան, 1999 (գրքի թարգմանությունը կատարվել է մեր կողմից - Ռ.Ա.)
- 3 Նույնը, էջ 16: Նշումները այսուհետև կիղվեն հայերեն հրատարակությունից:
- 4 Նույն տեղը էջ 16:
- 5 Նամակը գտնվում է Լոնդոնի Ջոն Մարրեյ ՄՊԸ գրադարանում: Չ.Դ., «Բայրոնը և հայերենը», էջ 18:
- 6 Թոմաս Սուր, Լորդ Բայրոնի կյանքը, նամակները, պարբերականները, Լոնդոն, 1830, էջ 125-127: Նշված գործում է ընդգրկված նաև քերականություն գիրքը, որը 1870թ. տպագրվեց Միսիթարյանների կողմից, երբ Բայրոնը այլևս կենդանի չէր, «Լորդ Բայրոնի վարժանքները և պոեզիան» ենթախորագրով. «Անգլիացի բանաստեղծների գեղեցիկ գործերը» ժողովածուի մեջ:
- 7 Չարլզ Դառուսթ, էջ 20:
- 8 Ավետարան, Վենետիկ, 1805թ., էջ 25-27: Չ.Դ., էջ 20:
- 9 Ղ. Ինճիճյան, Ամարանոց Բիւզանդեան, Վենետիկ, Ս.Ղազար, Չ.Դ., 1974, էջ 31:
- 10 Չ.Դ. էջ 33:
- 11 Նույնը, էջ 38:
- 12 Ch.D., Byron and Armenian, pp42-46, Չ.Դ. էջ 41-46:
- 13 G.Byron, 2Manfred, III, pp112-113, Չ.Դ. էջ 28:
- 14 Ռ.Որբերյան, «Լորդ Բայրոնը»: Բազմավեպ, Վենետիկ, 1930, էջ 268: